

Դիմողներն (բացառությամբ Բյուրոյին անդամակցող ապահովագրական ընկերությունների), անձը հաստատող փաստաթղթով, կրկնակի փորձաքննություն նշանակելու դիմումը և դրան կից անհրաժեշտ փաստաթղթերը կարող են ներկայացնել հետևյալ հասցեներով՝

- **Բյուրո՝ info@paap.am էլ հասցեով,**
- **Բյուրոյին անդամակցող ապահովագրական ընկերությունների՝ ՀՀ-ում բացված ցանկացած գրասենյակներ:** Ընդ որում՝ Բյուրոյին անդամակցող ապահովագրական ընկերությունները և նրանց կայքերը հրապարակված են Բյուրոյի կայքի առաջին էջում, իսկ ապահովագրական ընկերությունների և նրանց գրասենյակների հասցեները հրապարակված են ապահովագրական ընկերությունների ինտերնետային կայքերում:

Ապահովագրական ընկերությունները կրկնակի փորձաքննություն նշանակելու դիմումը և դրան կից անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնում են Lotus Notes համակարգով կամ Բյուրոյի՝ info@paap.am էլեկտրոնային փոստի հասցեով ուղարկելու միջոցով Բյուրոյի կանոններով սահմանված կարգով և ժամկետներում: